ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 93

«26» 08 2020 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կոտայքի մարզի դատախազ Սևակ Ալֆրեդի Հովհաննիսյանին փոխադրելու և Երևան քաղաքի դատախազի պաշտոնում նշանակելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Պետրոս Դանիելի Պետրոսյանին փոխադրելու և Կոտայքի մարզի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 26.08.2020թ. N 266-Ա և 267-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ս.Հովհաննիսյանի կողմից՝ Կոտայքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Պ.Պետրոսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Աֆանդյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Գրիգորյան Վիկտոր - Կոտայքի մարզի դատախազի տեղակալ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Խալաթյան Նաիրա - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Հովսեփյան Մարո -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
Սարգսյան Նելլի -	Կոտայքի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 20-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ